ԵՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում ստեղծված

«Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկայի» ՔՀԿ կոալիցիայի

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ և ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

(նախագիծ)

ԵՐԵՎԱՆ 2019

Սույն Շահերի բախման և էթիկայի կանոնները մշակվել են Եվրոպական Միության ֆինանսական աջակցմամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման կոալիցիայի կարողությունների զարգացման» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հասարակական աշխատանքը պրակտիկայի վրա հիմնված մասնագիտություն է և ակադեմիական կարգապահություն, որը նպաստում է սոցիալական փոփոխությունների եւ զարգացմանը, սոցիալական համախմբմանը, մարդկանց հզորացմանը եւ ազատագրմանը: Քաղաքացիական-հասրարակիան աշխատանքի անբաժանելի մաս է կազմում սոցիալական արդարության սկզբունքները, որոնք իրենց մեջ զետեղում են սոցիալական արդարության, մարդու իրավունքների, կոլեկտիվ պատասխանատվության եւ բազմազանության նկատմամբ հարգանքի սկզբունքները, որոնք մեծամասամբ կոչված ապահովել այս կամ այն ոլորտի կայուն զարգացումը՝ հաղթահարելով կամ կանխարգելելով խոչնդոտները: Ուսի <<Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված>> ՔՀԿ կոալիցիան ևս լինելով քաղաքացիակիան-հասարակական կառույց, իր բնականոն և քաղաքակիրթ գործունեությունը ապահովելու համար կազմվեց ստորև ներկայացվող էթիկայի կանոնների և շահերի բախման ռազմավարությունը:

Սույն փաստաթղթի նպատակն է՝

- սահմանել կոալիցիայի անդամների մասնագիտական էթիկայի հիմնադրույթները,
- նպաստել Կոալիցիայի գործունեության ընթացքում կոալիցիայի անդամների իրավունքների ու ազատությունների երաշխավորմանը,
- կարգավորել կոալիցիայի անդամների հարաբերությունները միմյանց հետ,
- նպաստել կոալիցիայի անդամների վարկանիշի աճին, գործունեության որակին ու մասնագիտական <պատիվը բարձր պահելուն:

Ինչպես նաև էթիկայի սկզբունքները և կանոններն ուղղված են՝

- Կոալիցիայի հեղինակության և վարկանիշի բարձրացմանը, անդամների միջև վարքագծի և հարգալից հարաբերությունների չափանիշների ձևավորման, պահպանման և արդարության ու թափանցիկության ապահովմանը:
- Էթիկային կարևորագույն արժեքները սկզբունքները և նորմերը ամրագրելուն, որոնցով կառաջնորդվեն կոալիցիայի անդամների,
- Կոալիցիայի անդամների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների միջև փոխհամագործակցության վարքագծի դրսևորման չափանիշները սահմանելուն,
- Միասնական էթիկայի սկզբունքներ և նորմեր խթանելուն՝ հիմնված բարձր էթիկական չափորոշիչների վրա՝ ստեղծելով և ապահովելով փոխադրարձ վստահության և հարգանքի միջավայր:

Կոալիցիայի էթիկայի սկզբունքներ և կանոններ

Ստորև ներկայացվում է էթիկայի կանոնները, որոնք պետք է դրված լինեն Կոալիցիայի անդամների միմյանց հետ համագործակցության և հաղորդակցության հիմքում՝

1. **Բարեվարքություն** – կոալիցիայի վարքագիծը համահունչ է մի շարք դրական բարոյական և էթիկական սկզբունքներին ու կանոններին, որոնք հենվում են հիմնական արժեքների վրա։

2. **Ազնվություն** - կոալիցիայի բոլոր անդամները պետք է մշտապես խուսափեն ցանկացած խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից կամ որևէ այլ անազնիվ արարքից:

3. **Ճշմարտություն** – կոալիցիայի բոլոր անդամները պետք է ճշմարտացի լինեն ցանկացած տիպի հաղորդակցության ժամանակ:

4. **Հարգանք այլոց հանդեպ** – կոալիցիայի բոլոր անդամները պետք է ցուցաբերեն կոալիցիայում ներգրավված բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ հարգանք, ճանաչեն կոալիցիայի դերակատարների՝ իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու և ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները:

5. **Վստահություն** - կոալիցիայի բոլոր անդամները պետք է միանգամայն վստահ լինել միմյանց նկատմամբ ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում:

6. **Հաշվետվողականություն** - կոալիցիայի բոլոր անդամները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար:

7. **Արդարացիություն** - կոալիցիայի բոլոր անդամները միմյանց նկատմամբ պետք է վարվեն անկողմնակալ, առանց խտրականության և անազնիվ դրսևորումների:

8. **Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն** – կոալիցիայի բոլոր անդամները պետք է պահպանեն կայունություն, հավասարություն և արդարություն՝ սոցիալական արժեքների նկատմամբ, ինչպես նաև ճանաչեն ապագա և ներկա սերունդների իրավունքներն ու պարտականությունները: Պետք է գործնականում

կիրառեն արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ կապված տարիքի, հաշմանդամության, գենդերի և գենդերային ինքնության, ռասսայի, էթնիկ պատկանելիության, կրոնի և դավանանքի:

9. **ժողովրդավարական ու էթիկական ղեկավարում և կառավարում** - կոալիցիայի բոլոր անդամները պետք է ընդունեն, որ կոալիցիայի ղեկավարումը և կառավարումը պետք է հիմնվեն բոլոր համապատասխան դերակատարների ժողովրդավարական ներգրավվածության վրա, և ղեկավարվեն էթիկայի հիմունքներով առաջնորդություն իրականացնող առաջնորդների կողմից:

10. **Որակյալ և մրցունակ աշխատանք** - կոալիցիայի բոլոր անդամները պետք է ընդունեն իրենց անվերապահ հանձնառությունը հնարավորինս որակյալ աշխատանք տրամադրելու հարցում:

11. **Անձի կատարելագործում և ցանցի բարելավում** - կոալիցիայի բոլոր անդամները պետք է ընդունեն Կոալիցիան ցանցի շարունակական բարելավման գործում առավելագույն ներդրում կատարելու կարևորությունը:

12. **Շահերի բախում**- կոալիցայի բոլոր անդամները պետք է կանխարգելեն, երբ Կոալիցիայի որևէ անդամ, իր լիազորություններն իրականացնելիս, նպատակ ունի է կատարելու գործողություն կամ ընդունելու որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելն է: Կոալիցիայի անդամներից ակնկալվում է խուսափել այնպիսի իրավիճակներից, որտեղ նրանց անձնական շահը կարող է բախվել, կամ նույնիսկ արտաքնապես, դիտվել որպես բախում կոալիցիայի շահերի հետ: Կոալիցիայի անդամները պետք է խուսափեն իրավիճակներից, երբ իրենց մասնավոր ֆինանսական շահերը կարող են ազդեցություն ունենալ Կոալիցիայում իրենց որոշումների կամ գործողությունների վրա:

    Կոալիցիայի անդամները պարտավորվում են մշտապես գործել կոալիցիայի լավագույն շահերից ելնելով, անձնական կամ մասնավոր նկատառումների կամ հարաբերությունների ազդեցությունից զերծ: Երբ Կոալիցիայի անդամ կազմակերպության շահերը բախվում են Կոալիցիայի շահերի հետ, շահերի բախումը պետք է արձանագրվի, Շահորի բախում ունեցող անձը/կազմակերպություն համապատասխանաբար մեկուսացվի որոշումների կայացման գործընթացից:

13. **Ինտելեկտուալ սեփականություն** - կոալիցիայի անդամները կարող են օգտագործել

իրենց մանսգիտական գործունեության ընթացքում կոալիցիայի այլ անդամի կողմից ստեղծված ինտելեկտուալ արժեքը, բայց՝ նախապես տեղեկացնելով ինտելեկտուալ արժեքի սեփականատիրոջը, ինչպես նաև՝ ցանկցացած կիրառման ժամանակ համապատասխան հղումներ տալով:

14. **Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն** - կոալիցիայի ցանկացած անդամն ունի իր կառույցի անկախությունը, կարող է ունենալ իր գրված կամ տարիների ընթացքում ձևաորված կանոնակարգը, առաջնորդի վերջինիս սկզբունքներով, բայց կոալիցիայի շրջանակներում պարտավոր է հիմնվել կոալիցիայի կողմից մշակված էթիկական կանոնների վրա:

15. **Թափանցիկության ապահովում**- կոալիցիայի անդամները պարտավոր են ապահովել հասարակության և շահակիցների նկատմամբ իրենց թափանցիկությունը, որը կարտահայտվի որոշումներ կայացնելու և հետագա գործունեություններում քայլերի մշակման ընթացքում:

16. **Պարտականությունների արդյունավետ իրականացում** -կոալիցիայի անդամները չպետք է ներգրավված լինեն այնպիսի արտաքին գործողություններում, որոնք կարող են վնասել կոալիցիայում իրենց պարտականությունների արդյունավետ իրականացմանը:

17. **Մրցակցային գործունեություն** - կոալիցիայի անդամները չպետք է մրցակցեն կոալիցիայի հետ կամ կոալիցիայի գույքը, տեղեկությունները կամ պաշտոնը կիրառեն իրենց գործունեության ընթացքում առաջացած անձնական հնարավորությունների և առաջխաղացման համար:

18. **Խարդախության դեմ պայքար –** կոալիցիան չի հանդուրժի որևէ խարդախ գործունեություն, և Կոալիցիայի անդամներից ակնկալում է ողջամիտ քայլեր ձեռնարկել խարդախության առաջացումը կանխելու համար և զեկուցել հնարավոր խարդախ գործունեության մասին:

19. **Քաղաքական միջոցառումներ և ներդրում** – կոալիցիայի այն անդամները, ովքեր մասնակցում են քաղաքական միջոցառումներին, պետք է համոզված լինեն, որ տպավորություն չի ստեղծվում թե նրանք խոսում են Կոալիցիայի անունից, եթե նախապես Կոալիցիայի հետ չի քննարկվել և համաձայնեցվել համատեղ քաղաքական դիրքորոշում: Կոալիցիայի անդամները չպետք է օգտագործեն

Կոալիցիայում իրենց ունեցած դիրքը՝ այլ անդամներին ստիպելու կամ ճնշում գործադրելու՝ որևէ քաղաքական ուղղության կամ օրակարգի աջակցելու կամ ընդդիմանալու նպատակով: Կոալիցիայի որևէ անդամ իրավասու չէ օգտագործել կոալիցիայի միջոցները, հարմարությունները կամ այլ ակտիվները ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցելու որևէ քաղաքական թեկնածուի կամ քաղաքական կուսակցության՝ առանց Կոալիցիայի խորհրդի թույլտվություն ստանալու: Բոլոր քաղաքական ջատագովությունները պետք է համապատասխանեն սույն Կանոններին:

20. **Մրցակցություն** – իրատեսական է ենթադրել, որ Կոալիցիայի անդամ կառույցները կարող են հայտնվել մրցակցության իրավիճակում՝ նույն ֆինանսական աղբյուրից միջոցների հավակնության, կամ որևէ այլ՝ մրցութային ընտրության պայմաններում: Նման իրադրության մասին տեղեկություն լինելու դեպքում՝ Կոալիցիայի անդամները կարող են քննարկել ջանքերը համատեղելու հնարավորություն: Մրցակցությանը համատեղ հավակնելու անհնար լինելու դեպքում՝ Կոալիցիայի անդամները պետք է մրցեն փոխադարձ հարգանքի, արդարության և վարվելակարգի բարձր կանոնների պահպանման պայմաններում: Կոալիցիայի մրցակից անդամների ինտելլեկտուալ սեփականությունը մրցակցության նպատակով օգտագործելը այստեղ ևս՝ պարտադիր է հեղինակ կառույցի համաձայնության առկայության պայմաններում միայն:

Սույն էթիկայի կանոնները պետք է ընկած լինեն կոալիցիայի անդամների միջև հարաբերությունների հիմքում: